

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ճ Ա Կ Ա Տ Ա Գ Ր Ի § 0 Ն Ը

(Համբարձումը)

Վ.Ի.ՃԱԿ ՀԱՆՆԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

Վ.Ի.ՃԱԿԻ ԵՐԳԵՐԸ

Հեթանոս հայի այս հաւատալիքները, որ այնպէս պարզօրէն երևում են վիճակի սովորութեան մէջ, կարելի է չորս գլուխների բաժանել և խօսել իւրաքանչիւրի մասին շատ կարճատ. Բուսականութեան-ձառերի պատճառով, ք. արմատների եւ ծաղիկների պատճառով առանձին, գ. ջրի պատճառով, և դաստիարակի կամ երկնային մարմինների պատճառով.

Ա. Բուսականութիւն-ձառեր:

Որ հին հայերը հեթանոսութեան օրերում բոյսերի պաշտամունք ունեցել են, արդէն յայտնի է: Այդ հաւատալիքների մնացորդները մինչև մեզ էլ հասել են. իբրև փաստ կարելի է յիշել և այդ բաւական է, որ այժմ էլ Հայաստանի զանազան կողմերում անթիւ են այնպիսի ծառեր, որոնք իրենց հրաշագործ յատկութեան համար պաշտում են—պաշտամունքի առարկայ են. ճիշդ է, որանցից շատերը իրենց սրբութիւնը ստացել են այս և այն սրբի անունով, որ բոլորովին ուշ ժամանակի գործ է, բայց և միւս մեծ մասը «սուրբ ծառ» են աւանդական օրերից մնացած, և իրենց յատկութեամբ ոչ մի բրիստոնեայ սրբի չեն ծառայում:

Տիգրանահեղաթիւ և Հղուի դաւառում ծառապաշտութիւնը (ինչպէս և ջրապաշտութիւնը) հայերի մէջ ընդհանուր տարածուած սովորութիւն է, նոյն չափով և բրդերի և եղիտիների մէջ¹: Հէնց միայն Վարանդայում կարելի է համարել տասնեակ «Խնձորածառի խաչ. Ոսկէ խաչ. Կանաչ խաչ» և այլն զանազան անուններ կրող կաղնի, չինարի և ուրիշ վիթխարի ծառեր, որոնք իրենց պարունակած զօրութեան շնորհիւ պաշտում են

1, «Մանանայ»—Գ. եպո. Արուանձտեան:

սեղացիներէից և տարուայ որոշ օրերին ուխտատեղի են: Սրանք պատժում են իրենց չյարգողին. բժշկում են հիւանդութիւններ, զոներ են պահանջում: Սոցա վրայ երկնքից լոյս է իջնում, որանց վրայ բնակում են աներևոյթ ոգիներ, թէ շար և թէ բարի, նոյնպէս հրեշտակներ և սրբեր: Այսպիսի անուն ունեցող ծառերը անխտիր բժշկում են և՛ մարդու և կենդանու: Նիհար երախտներին մտցնում են հառտարուն ծառի խուռջի մէջ, որպէսզի առողջանայ՝ թէ հիւանդ կենդանիներին և թէ հիւանդ մարդկանց եօթն անգամ ման են տալիս «ղորատոր» ծառի չորս կողմը. զոհում են ոչխար, արաղաղ, խունկ են ծխում և մոմ վառում: Սուրբ ծառից ծորոզ հեղուկը մորթային հիւանդութիւններին դեղ է համարւում: Այլ ոք չի համարձակուի այս ծառերից մէկը ատուելի, կամ ճիւղերը կըտրել, և կամ ցած թափուած չոր փայտերը տանել. այսպիսի յանգուգն մէ՛ին ծառից առաջ ժողովուրդն է պատժում, որ յանդգնել է ծառի բարկութիւնը շարժել: Եթէ այս ծառերից մէկը պատահամա՞ք չորանայ, այնուհետեւ էլ չի դադարում հրաշագործ լինելուց: ամէն սը աշխատուէ հառտարուն ծառի փառած կտորներ հաւաքել, իբրև թանկապին դեղ-փառած փայտը լուծում են ջրի մէջ, որից ստացւում է դեղնադոյն հեղուկ և դա ամենարոյժ դեղն է համարւում: Ուրմիայում կայ մի հսկայական ուռենի—Մառահիւան անունով, որի երզումը ամենազօրաւորն է համարւում. հարիւրաւոր տարիներից ի վեր աճել է այդ ծառը, ամէն մի ճիւղը այժմ դարձել է արշինանոց արամագծով, իսկ բունը մի սաճենից աւելի արամագիծ ունի. ծանրութիւնից հսկայ ճիւղերը գետին են խոնարհուել, այնտեղ արմատ բռնել և աճել իբրև նոր վիթխարի ծառ, ճիւղերը ահագին տարածութիւն են բրնում, իսկ մօտերըում թափուած փայտը անուպառ է. ս'ի կհամարձակուի ձեռք տալ նրան: Շրջակայ հայ և ատորի ժողովրդի, մինչև իսկ թուրքի համար այդ ծառը ամենազօր սուրբի համբաւ ունի ուխտաւորներն անպակաս են:

Մեզանից ո՞ւմ հայրենի գիւղում չի գանւում այգպիսի սուրբ ծառ: Նրանց կողքին շատ անգամ անբաժան են լինում նրանց անունով շինած մատուռներ, որտեղ մի խաչ է լինում, իսկ այդ խաչը միայն մոմ վառելու համար է անշուշտ:

Այս բոլորը ցոյց են տալիս որ նախնի հայերը իբօք ունեցել են ծառերի զօրեղ պաշտամունք, որը գեռ ևս նոյն ձևով

1. «Մուսցում աշխարհ»—«Մեր կրկնու պըպօրնին».—Յ. ք. մուղ.

չարունակում է մի քանի ետ ընկած տեղերում: Այս մեծ ծառերից դատ կան փոքր թուփեր էլ, որ մարդկանցից նոցա շորի կտորի հետ աւնում են և նոցա հիւանդութիւնը, այս թիփերը բացառաբար փուշ են լինում. սրանք ծածկում են գոյնզգոյն շորի կտորներով, որ ամէն մի մօտիկից անցնող պարտք է համարում անել, յայտ ունենալով, որ այգպիսով այնանգ կթողնի և իր հիւանդութիւնը: Հիւանդութիւնը վերցնելու յատկութիւն է վերագրում գլխաւորապէս այն թիփերին, որոնք գտնւում են բուժիչ աղբիւրների մօտ, առանձնապէս դով հիւանդութիւնը բժշկող: Լողանալով ցուր կամ հիւանդիւնը մարմնից գուրս է գալիս, ծառին կապած շորի հետ այնտեղ է մնում վերջնակապէս:

Ստպուրականում Հոգւոց վանքի մօտ առատութեամբ բուսնում են «չար փուշ» անունով մացառներ, որոնք նշանաւոր են շար ոգիներ հալածելու զօրութեամբ. այդ վանքին ուխտի դնացող ամէն Վանեցի իր հետ բերում է այս փշից և իբրև թանկագին բան բաժանում իր ազգահայրներին ու դրացիներին. ամէն տուն իր գլխաւոր և երկրորդական մուտքի մօտ, պատի մի ճեղքում ամրացնում է այդ փշից, որպէս հզօր պարապան և հալածիչ շար ոգիների, որոնք մի աւշխատում են աներում մուտք գործել: Մի քանի տեղերում սպիտակ վարդի փշով չեն խփի իրար, կարող են գժուել: Չար տշբից ազատ մնալու համար բոլի ծառի փայտից կտորներ են պահում գրպաններում, գիւղերում նոյն փայտից յուռուր են շինում և կախում գամէշների ու եղների վրից, գարձեալ նոյն նպատակով:

Այսպէս երեք կարգի յատկութիւններ են վերագրում ծառերին և փշերին. հիւանդութիւնների բժշկութիւն, պաշտպանութիւն շար ոգիներից և շար աշքերից: Այս երեք հաւատալիքները ընդունում են մեզ հետ բնակակից ուրիշ ազգերը, թուրքերը, քրդերը, եզիտիները և ասորիները:

Բ. Արմասներ եւ ծաղիկներ.

Հէքաթների մէջ մեծ դեր են կատարում անմահական ծաղիկները, խճորները եւ ջրերը. սրանց վերագրած յատկութիւնները հէքաթների ծնունդի չափ հին են ի հարկէ, հին ժամանակներից մեզ հասած, դրանք համամարդկային են և դարձեալ հեթանոսական: Չուրը ապիս է առողջութիւն, խիւ բոյսը կեանքի երկարութիւն. երկունն էլ արտայայտի են իրենց մէջ պարունակած ոգու զօրութեան-ջրի ոգի և բուսականութեան ոգի:

Այս երկու սղինների մարմնացումն են հօրոսն ու մարոսը ¹, երկու գեղեցիկ ծաղիկներ, որոնք ժողովրդին ներկայանում են ճիշտ այդ ձևով:

Ինչպէս տեսանք վիճակի սովորութեան մէջ կայ ջրի սղու և բուսականութեան սղու հաւատալիքը ազօտ կերպով—համարձման գիշերը լողանում են առողջանալու համար, բոյսերի միջոցով աշխատում են իրենց կեանքի երկարութիւնն իմանալ: Ժողովրդի հաւատալիքով ծերացած օձերը, երբ սաակելու ժամանակը հասնում է, որոնում են անմահական ջուրը, սողում են նրա մէջ, լողում մի ժամանակ, յետոյ դանում են անմահական ծաղիկը, նրա թերթերից ուտում և վերանորոգւում են, միայն շապիկը փոխելով:

Վանեցու չորսնուկը—սիբիսիբի (երեքնուկ) և Մշեցու «սիրոյ կօճը» անյոյս սէրը յաջողեցնում են. հետքեր են երևում, որով բոյսերից սմանք ներկայանում են սիրոյ կամ անառակութեան առաւելածուհու պաշտամունքով, կամ նրա ոգու զօրութեամբ, որովհետև դրանց միջոցով հպատակեցնում և կամակատար են դարձնում ցանկացած կնոջ կամ տղամարդուն. սա լսի տարփանք է առաջ բերում ենթարկուողի մէջ, սրանով հեշտութեամբ տիրանում են ուրիշի կնոջը կամ մարդուն, նայած թէ ում մօտ է «սիրոյ կօճը»: Սակայն այս կարգի բոյսերից ամենանշանաւորն է յոճակը, որ մեաժամանակ մի քանի սղինների ոյժ է ամփոփում իր մէջ: Այս մարդակերպ արմատը մի կատարեալ դիւթական դաւաղանի յատկութիւններն ունի—տալիս է մարդկանց իմաստութիւն, ուրիշների վրայ իշխելու կարողութիւն. բժշկում է ամեն հիւանդութիւն, հալածում է չար սղիններ. մի խօսքով մի քանի բոյսերի յատկութիւններն իր մէջ է միացնում, սէր էլ է յաջողեցնում, ինչպէս և ցոյց է տալիս առասպելական դանձերի թաղուած տեղը: Վանեցի երախաներն անգամ հետամուտ են այս չնաշխարհիկ բոյսը ձեռք բերելու, սրպէս զի դժուար գործը հեշտանայ, ոսկիներ դանեն, ուժով լինեն, անվախ սիրտ ունենան. և ին:

Ափսոս որ այդ հազուադիւտ արմատը ձեռք բերելը կասկած է գրեթէ անկարելիութիւնների հետ, նրա արմատը շնա խօրն է, հարկաւոր է իմոնալ կախարդական աղօթքներ, որ պիտի ասել նրան հանելու ժամանակ, իսկ այդ աղօթքները

1. Այս ծաղիկների անունները պարսիկին նոյնանում են ջրի երբուսականութեան ողիների անուններին.—Ամէշասպինդա՝ հարվաղաղ (հորոս). ամէրվատաա (մորոս).—amešaspinda havervadad. amešaspinda amervadad;

միայն կախարհները դիտեն: Վանեցիին ասում է, որ այդ արմատը հանողը շատ անգամ պէտք է կեանքից ձեռք վերցնի. ով որ լուշտակի ձայնը լսի, որ նման է երախայի ճղոցի, իսկոյն կմեռնի: Ահա այս պատճառով քչերն են հետամուտ լինում նրան, թէև անխտիր ընդրի համար աննշալի բան է: Լոշտակը, ըստ Վանեցու հաւատալիքի մինչև 40 արշին խորն է թաղուած. այնպէս որ անհնար է այդ բոյսի արմատը ամբողջութեամբ հանել. նորա մի մասն ստանալու համար այս դործողութիւններն են կատարում: Մի քանի հոգի միացած արմատի շորս կողմը փորում են աղօթքներ մըմնջալով. որպէս զի նրա կտրուելու ձայնը չլսեն ու մեռնեն, բերում են մի քաղցած շուն են կապում բոյսին, մի քիչ հեռու միտ են դնում ու իրենք ականջները բռնած փախչում: Շունը, աշխատելով միսն ուտել, ձիգ է տալիս կապը և կտրում հանում է արմատը, բայց և ինքը տեղնուտեղը սասկում: Ուրիշ տեղերում շունը փոխարինում են մի ուլով կամ հաւով, որը իբրև նուէր—զոհ է ծառայում և մեղմացնում է սգու բարկութիւնը: Լոշտակ հանելու յարմար ամիսը մայիսն է համարւում:

Խորենացու պատմութեան առեղծուած կտորներից մէկն էլ կապ ունի մի ինչ որ բոյսի սէրը յաջողեցնելու յատկութեան հետ. այնտեղ յիշուած «խաւարծի» բոյսը Վանեցու խաւածիլի է գուցէ, որ Խորթելի բոյս է, սակայն դրան սէրը յաջողեցնելու յատկութիւն չի վերադրւում:

Կան մի շարք ուրիշ բոյսեր էլ, որոնք մարմնացումն են այս ու այն ուժի, և որանց թիւը սկզբում շատ է եղել և յատկութիւններն էլ անշուշտ բազմազան. միայն ամսոս որ մոռացուել են:

Բ. ՉՈՒՐ:

Հայերը պաշտել են երկինքը—երկնակամարը իւր բոլոր լուսաւորներով. իսկ երկնակամարը, նրա կարծիքով Չուր է, իսկ այդ ջրի պատկերացումը կրկրի վերայ հանգիստնում է ծովը, գետը, աղբիւրը. և պաշտւում էին դրանք նախնի հայերի մէջ: Պաշտուել է ծիրակի ծովը. որ ծնել է Վահագն դիւցադնին, յետոյ և Սանասարին ու Բաղդասարին: Ծովը ծնում է և հրեղէն ձիեր, ամէն մի հերոսի ձի ծովի ծագումն է ունենում. մինչև այժմ էլ Այդըր լիճը Արարատեան նահանգում և Արջակ լիճը Վասպուրականում շրջակայ ժողովուրդների հաւատալիքով ծնում են հրեղէն ձիեր:

Չուրը տալիս է անմահութիւն՝ հէքաթների մէջ. տալիս է

յաղթանդամութիւն և գերմարդկային ոյժ մեր «Դաւիթ և Մհեր» անուն դիւցազնական վէպի մէջ՝ վէպի հերոսներին. որանց ձիերը նոյնպէս ջրից են ծնուել: Հրաշալի յասկութիւններ ունեցող «լոյսաղբերներն ու կաթնաղբիւրները» ժողովրդի հաւատալիքով կազմուած են երկնքի լոյսից, ուրեմն ջուրը դարձեալ կապուած է երկնքի-երկնականութիւն հետ: Այս աղբիւրները բժշկուած են զանազան հիւանդութիւններ, դող, տաքութիւն, մորթային հիւանդութիւններ և այլն: Արանց ջրերուձ լողանում են հիւանդները մի քանի արարողութիւններով և նուէրներ տալով, ինչպէս տալիս էին ծառերին: Վանում ամէն եկեղեցի իր բակում յատուկ ջրհոր ունի, որի ջուրը մասնաւորապէս դողը բժշկուած է. հիւանդները լողանում են, եկեղեցում մօմ վառում և հեռանում: Ջուրը բաց է անում կոյր աչքը. այս բանը հէքաթների մէջ շատ է պատահում. Բիւրակն սարի վրայ մի աղբիւր կայ, որը մի կոյր աղջիկ է բժշկել և մի մորթած թռչուն կենդանացրել երբ այդ ջրի մէջ լուանում էին:

Հստող ջուրը հաւատարապէս սուրբ է հայերի և թուրքերի համար, նրա մէջ չեն թքում, ապականութիւն չեն թափում: Ապականուած ամանը օրհնած ջրով են լուանում, ուրեմն ջուրը մի որբազան բան է (քահանայի օրհնելն էլ մի աւելի բան է), որ կարողանում է միների, շների և ուրիշ կենդանիների պղծած-ապականած ամանները պղծութիւնից ազատել միայն սրսկելով:

Աղբիւրներից շատերը հանքային լինելու պատճառով ունին բժշկելու յասկութիւն, գուցէ և մասամբ այստեղից ծագած լինի ժողովրդի նրանց նուիրած պաշաամունքը, սակայն ժողովրդի պաշտած երկնքից իջած անձրևից գոյացած աղբիւրները, բնական է, կուենային նոյն զօրութիւնը, ինչ որ երկնքն ունի, և հետևաբար և կբժշկէին ժողովրդին վատ հիւանդութիւններից:

Գ. Ա ս ս դ ե ր .

Վիճակի երգերից իւրաքանչիւր տուն ճակատագրական նշանակութիւն ունի այն անձի համար, որի հերթին աւուած է այդ տունը. և որովհետև թէ՛ նախնի և թէ՛ ներկայ հաւատալիքներով աստղերը ճակատագիր որոշող են, հէնց դրա համար էլ ջուրը դնում են «աստղունք»-բարի աստղերի ներգործութեան տակ. . . «Աստղազարդ երկնքից է կախուած ամէն բան, առանց նրա ոչ մի դէպք չի պատահում» (der armenische volks-glaube): Այժմ ասում ենք չար աստղի տակ է ծնուած, կամ

հակառակը, որանք բոլորը նախնի աստղապաշտութեան հետքեր են: Վարանդայում և ուրիշ շատ տեղերում նոր ծագող արևը երկրպագում է ծերունիների կողմից, նոյնպէս և ծնունդ լուսինը: Եզնիկ Կողբացին դեռ հազարաւոր տարիներ առաջ յիշում է մի շարք աստղապաշտական հաւատալիքներ որոնք դեռ գոյութիւն ունին մեր ժողովրդի մէջ: Գուշակութեամբ պարսպողների մօտ դանւում է «ախտարք» անունով մի գիւրք, որի մջջի կանոններով և աստղերի շարժումներով գուշակում են: Աստղերով գուշակութիւն անելը այժմ մեր մէջ վերացել է գրեթէ. Վանեցին ասում է, այս ինչ մարդը «աստղունք կերիչէ» և կիմանար շատ անյայտ բաներ: Մեր օրացոյցները դեռ շարունակում են տալ հատ ու կտոր գիտելիքներ-աստղաբաշխութիւնից. նայած թէ երախտն ո՞ր կենդանակերպի տակ է ծնւում, լինում է հարուստ, զօրաւոր, իմաստուն, կամ չար, բանաւոր և այլն: Իսկ գիտաւորի երևալը կապ ունի մի աղէտի հետ. նրա ձևից, գոյնից, դիրքից օրջից գուշակում են աղէտի չափը (Մանանայ 339): Ամէն մարդ երկնքում իր աստղն ունի, որից է կախուած մեր գոյութիւնը, եթէ նա պայծառ է փայլում, այդ անդրադառնում է մեր կեանքի վրայ, հակառակը՝ նոյնպէս: Մինչև անգամ ամէն երկիրն իր աստղն ունի. «կնիկ, իլը վեր Սասնու աստղը մժղավեր է» ասում է Զէնով-Օլիանը, երբ գուշակում է Մհերի նեղ վիճակը:

Մեր առաջ բերած փաստերը բոլորն էլ այս կամ այն կերպ երևան են գալիս վիճակ հանելու սովորութեան հետ կապուած արարողութիւնների մէջ. այդ սովորութիւնը տեղով հեթանոսութեան բեկոր է, որ պահուել է. խրճիկ շինելը պերճախօս ապացոյցներից մէկն է, որ իր արտաքինով յիշեցնում է մի որ և է կուռք, նրան մատուցած յարդանքների մասին իր տեղում յիշեցինք, հաւանօրէն տաճարների արձաններից դուրս ամեն տուն այդ ձևի խրճիկ-անային կուռք ունեցել է: Զբերի, ըոյսերի և աստղերի դերը ամբողջապէս պատկերացաւ մեր առաջ. կախարդական դիշերը մի գեղեցիկ ամփոփումն է այս բոլոր հաւատալիքների: Մեր ունեցած հաւատալիքները միջնորդաբար վերցրել ենք—Հնգիկներից՝ բուսականութեան. Քաղդէացիներից՝ աստղերի. Պարսիկներից՝ հրամանքի և ճակատագրի. իսկ անթիւ արձանների և դրանց հետ ոգիների-զօրութիւնների մուտքը Յունաստանից՝ պատմագիրները վկայում են: Աւ այդ բոլորը միախառնուած, թէև խիստ աղօտ կերպով ցոլանում են Համբարձման ասնի մէջ:

Մի թանկագին յիշատակարան է դա մեզ համար մեր նախնեաց հողևոր հեանքի քմբռնումների, այդ սոլորութիւններից իւրաքանչիւրը աւելի առատ տեղեկութիւն է ապիս մեզ մեր նախնիքների մտաւոր հեանքի մասին քան մեր ամբողջ պատմագիրները միասին վերցրած. նրանց կրօնական հեանքը, աշխարհահայեացքը աւելի պարզուում է այդ մի քանի հատուկտոր սոլորութիւններով: Այդ հաւատալիքները այնքան հարազատ ու համապատասխան են եղել մեր ժողովրդի հոգումն, որ միայն մի մեծ և նոյ քաղաքակրթութիւն հազիւ սրբի դրանք ու տեղը նոր բաներ դնի: Առանց դրանց ժողովուրդը չի կարող ապրել...

Անցնենք մի քանի խօսք էլ ասելու վիճակի երգերի մասին և վերջացնենք մեր այս համառօտ նկարագրութիւնը:

Վիճակի երգերը.

Մեր ժողովրդի երգասիրութիւնը յայտնի է. այդ երգերի մէջ առանձին տեղ է բռնում վիճակի երգը, որ յայտնի է «Ջան գիւլում» անունով. սիրոյ երգերից յետոյ սրանք ամենալաւ երգերն են իրենց զգացմունքի խորութեամբ և ոճի պատկերաւորութեամբ: Երգերը ամէն տեղ էլ մի եղանակով են երգուում «Ջան գիւլում» կամ «Ջան ծաղիկ» կրկնակներով: Գրի առնուածները մօտ 500 տուն են, ցրուած պարբերական թերթերում, զանազան երգարաններում, և մեծ մասով «Աղգագրական Հանդէսը» համարներում: Արանցից դուրս են մնում շատ քաւառների երգերը, որոնք կորչելու վտանգի տակ են: Երեսն թուի չափ այս երգերը մտքի, բովանդակութեան կողմից թէև աղքատ չեն, բաղմազան չեն: Նոյն միտքը երգուում է զանազան տեղերում տարբեր ձևերով և բառերով, շատ անգամ նոյնիսկ բառերը թարգմանած, օրինակ, միևնոյն տունը Վանում, Նոր-Նախիջևանում և Բայազետում երգուում է, միայն, ի հարկէ, ինչպէս ասացինք թարգմանուած գաւառաբարբառներով:

Վիճակի երգերը ընդհանրապէս քառեակներով են. յաճախ պատահում է երկու և երեք տողանի տուն. բայց այս դէպքում կրկնակը լրացնում է և նորից քառեակ է դարձնում: Չափը անկանոն է և բաղմազան. վանկերի թիւը խաղում է 7—10—12-ի մէջ. հատածի մասին ոչ մի կարգ չկայ, թէև պատահում են շատ ներդաշնակ աներ, բայց ընդհանրապէս ազաւաղուած են և անկանոն: Այս անկանոնութիւնները մասամբ առաջ են եկել հաւաքողների անփութութիւնից: Աւե-

լորդ կլինի փորձել այս երգերի հեղինակը գտնել, դրանք ժողովրդի անհապտելի սեփականութիւնն են կազմում և դրանց հեղինակը հէնց ինքը ժողովուրդն է եղել: Առանձնապէս աչքի են ընկնում Գանձակի, Վանի և Ղարաբաղի ժողովուրդների երգերը, սրանցը թէ՛ ճոխ է և թէ՛ գեղեցիկ:

Իբրև նմուշ մէջ բերենք մի քանի ընտիր կտորներ:

Սարի գլխունը ես եմ,

Ձկներու կէսը ես եմ,

Քնոյ քրտնոյ ետքոյ

Գիշերուայ ընկեր ես եմ:

Նռան ծառին նուռ չկայ,

Վարդի ծառին վարդ չկայ.

Էս վե՛նց քանդուած օլքայ ա,

Սիրածը սիրածին շեն աայ:

Չնդան ա, ինչպէ՛ս զնդան,

Մէջ վարդ ա, բոլոր ուէհան.

Իմ ետքոյ խաթրի համար

Մէջ ծաղիկ, շարան-շարան:

Գնա՛, գնալուդ մեռնեմ,

Գնալ ու գալուդ մեռնեմ.

Որ սարը աշմիշ ըլնես,

Թառանչ քաշելուդ մեռնեմ:

Ուրիշ աւելի ընտիր կտորներ յետոյ կլիշենք:

Երգերը իրենց բովանդակութեամբ մի քանի քանի շուրջն են դառնում—երգուում է աղջկայ արտաքին գեղեցիկութիւնը, որ այնքան բազմակողմանի չէ. աղայի քաջութիւնը, ձայնը. և յետոյ գեղեցիկութիւնը նոյնպէս. գանգամներ կան սիրականից, անգութ ծնողներից, որոնք արգելք են հանդիսանում իրենց ցանկութեանը. անիծում են բախար-ճահատագիրը. հարստութեան մասին կան մի քանի կտորներ, որտեղ այն առանձնապէս գրաւիչ մի բան չի գուրս գալիս, այլ երկրորդական լրացուցիչ բան:

Հայ երիտարարդը ցանկանում է, որ իր բերած հարսը, լինի բարձրահասակ, խիտ և երկար մազերով, որի աւելի չէին է սիրում քան սևը, երևի հապտապիւտ լինելու համար: աղջիկը պէտք է լինի բարակամէջք, սիպտակ ու կարմրերես: Բերենք մի քանի կտոր երգեր, դրանցից կենդանի կերպով երևում է այս ամէնը.

Ա՛ղջիկ, գնանք մեր բազը,

Պակեմ շամամիդ թաղը.

Էդ երեսիդ շաֆաղը (լոյսը)

Հանել ա սրտիս դաղը:

Էս գիշեր լուսնակ գիշեր,

Ձինն էկել գետին նախշել:

Գոշգ դէմ արա պաշեմ:

Կեռ ունքեր, կարմիր թշեր:

Մեռնեմ չալ չալ աչքերիդ,

Թուխ աչք, կարմիր թուշեր:

Սև աղայ, սիպասի տղջիկ,

Բռնել ենք իրար ետխայ:

Երգւում է աղջկայ կապոյտ աչքը, բարակ մասները, դա-
լամով քաշած ունքերը, անուշ ձայնը, քայլուածքը և այլն:

Իր հերթին աղջիկը ցանկանում է, որ սիրած տղան կարծ
լինի, լաւ բեխերով, գանգուր մաղերով, քարձրահասակ, անուշ
ձայնով և կարգացուոր (ի հարկէ սաղմոս)։

Էն թուխ բեխաւոր տղէն

Ուշն ու միտքս ասրել ա:

Հրէս էկաւ իմ ետըր,

Ալ ձին տակին խաղալէն:

Կանչի կանչելուդ մեռնեմ:

Ես եմ քո հաղի միջին:

Լոնել եմ կարգացուոր ես,

Սաղմոսիդ ծալին մեռնեմ:

Երգերի ամենամեծ մասը զբաղուած է սիրահարներով.
նկարագրում են նրանց վիճակը, կարծես մի բուռն բողբոջ
հանգամանք ունի նրանց ամէն օտղը, ամէն բառը. անէծք են
կարգում դարևոր դաժան հասկացողութեան դէմ, որով սիրա-
հարութիւնը համարւում է յանցանք և խտուրթեամբ հալած-
ւում է:

Գեղջուկ տղայ և աղջիկ մի փոքր հասակ առնելուց յետոյ
այլ ևս անմատչելի են իրար համար, թէև նրանք ամէն բողբոջ
ջրի թէ հանդի ճանապարհին, դռանը թէ կտրան իրար են պա-
տահում, և մինչև մի քիչ հասակ առնելը միասին են մեծացել:
Ազատ են զգում ուխտադնացութիւնների ժամանակ, կամ
նշանաւոր տօներին, երբ առհասարակ տեղի են ունենում սի-
րահարական քացադրութիւններ. իսկ սա մեծ յանցանք է և
աններելի սխալ, որոնք ենթարկւում են ծաղրի և անարգանքի
ամէն տեղ: Այս պատճառով էլ սիրահար զոյգը թագցնում է
իր փոխադարձ զգացմունքը, առաջ է դալիս գիշերային տե-
սակցութիւնների շրջան, որը սիրահարներին ամենացանկալի

բանն է: «Ես քեզ թագուն սիրեցի, ո՞վ արաւ խալխին իմաց»—
գանգաաւում է սիրահարը երբ բանը յայտնուում է և վերջ է
զրուում տեսակցութիւններին: «Էս թագը դալմազաւ ա, ման
տու էն թաղովն արի»—ասում է զգուշաւոր սիրուհին իր հա-
րօտած սիրահարին: Գիշերային տեսակցութիւնը լինում է դաշ-
տում, կամ աւելի ասնկըններում, մըշտ գիշեր ժամանակ: Նը-
բեմն սրանց օգնում են տարեկից ընկերները, քոյրերը կամ
աղգահանները:

Երգերի մէջ յայտնուում է նրանց հայեացքը սիրոյ և ամուս-
թեան մասին.

• • • Եարն որ եարին սիրէ,

Ասու լիսն ի՞նչ կանէ:

Իմ մօր աչքը դուս գայ

Վեր ինձ տուեց զարկը աղի:

Կիրակի էլ պաս կլնի՞,

Էր ծաթից լաւ թաս կլնի՞,

Որդիդ մեռնի վարդապետ,

Սիրածը չըհաս կլնի՞:

Սիրահարների գաղանի տեսակցութիւնը լինում է և աների
պատի բացուածքներով, բայց այս մօտ և հեշտ տեսակցու-
թիւնն էլ չի բաւակացնում նրանց. նրանց սիրող սիրալը չի
ցանկանում բաժանուել ոչ մի արգելքով.

Մեր տուն ձեր տուն մին պտեր,

Միջի պտաը չի պտեր.

Միջի պտաը ո՞նց անի,

Քաւթառ տաաը չի պտեր:

Ձեռք վերսւ Աստուած կանչի,

Շնգլխիկ պառուիկ վերանայ:

Իմ սէր քո սէր մօտանայ:

Ձանազան պատճառներով, որոնց մէջ մեծ տեղ է բռնում
նիւթականը, առհասարակ քիչ է աջողում սիրահարների
գործը. նրանք խորհուրդ են անում—«Իմ մէրը ինձ քեզ չի
տալի, իմ հօրը քրթամ ասա» (կաշառք տուր):

Իսկ երբ վերջապէս յայտնուում է ամէն բան, անդուժ-
ժնողները կատաղած, որ իրենց օջախի պատիւը արատաւոր-
ուած է, սկսում են ամէն միջոց ձեռք անել կտրելու նրանց
յարաբերութիւնը: Սրանք յուսահատուում են. աղջկիք ասն
անկիւնում ողբում է իր կորցրած ետքին, որ ո՞վ գիտէ, սրտի
ցաւից որ տեղերում է թափառում. «Իմ ետքը սարում քո-
լում, իմ քունը ո՞նց կտանի». երգում է նա: Այս զրուժեան
մէջ ողբալի է աղջկայ վիճակը: Իսկ դժբախտ ազան այլ ևս ոչ

մի գործի կպչել չի կարող, վիշաք նրան ցրուած գրութեան մէջ է գնում, աննպատակ թախառում է, միայն իր սիրածի մասին մտածելով, օրերով տուն չի գալիս, նրան գփի տեղ են գնում, սակայն նա երգում է.

«Մեր տան տակին վար կանեմ.

Զալ ազուաւին քար կանեմ.

Թող իմ սիրածն ինձի տան,

Գժութիւնս թարկ կանեմ:

Այսպէս է անցնում աղայի օրը. նա կարող է իր վիշաք մասամբ մոռանալ, գլուխը մի քարի տուած քնել, անտան-ներում ման գալ: Իսկ աղջիկը խիստ անտանելի գրութեան մէջ է ընկնում. տանը փահուած, անմտիթար սուգ է անում և սիրածի կարօտը քաշում.

Ինձ հուք մի ծեծեանակ պիտէր,

Յերեկ դար իմ օդէն ել ու մուտ անէր.

Գիշեր դար իմ ծոց ծուարէր,

Արտիս դարպեր ցրուէր խորովէր:

Անվերջ ամառուելով երկու ծածուկ սիրահարները սպա-սում են Համբարձման վիճակին, որպէս զի իմանան ճակա-տագրի կամքը. եթէ վատ բան գուշակուեց ընտրովին յուսա-հատում են և հաշտում ճակատագրի «հրամանքին» — «Եմ հօրն ու մօր ինչ անեմ, ճակտիս այս էր գրած: Եւ իսկապէս ինչպէս կյանդգնին այլ կերպ մտածել. երբ բախտախաղը գուշակում է ու վերջն էլ աւելացնում. «Գրիտոս իր բերնով ասաց. այս քո ճակատդ էր գրած»:

Ընդհանրապէս սիրահարութեան մասին շատ է երգում, հարստութեան քիչ տեղ է տուած. այս կողմից միայն Վանե-ցին է քացառութիւն կաղմում. սիրուց զատ նա, Վանուհին, պահանջում է նիւթական առատութիւն: Աւրիշ տեղերի երգերի մէջ ապագայի մասին ոչ մի խօսք չկայ. միայն ներկան է գրաւում սիրողներին, բայց Վանեցին իր երգերի մէջ պարզ որոշում է, թէ ամուսնութիւնը ինչպէս պիտի լինի. արդեօք բախտաւոր, թէ անբախտ պիտի լինի: Առհասարակ պէտք է նկատել, որ վիճակահանութեան մտքին աւելի յարմար է Վա-նեցու երգը, քան ուրիշներին:

Բախտաւորութիւն գուշակելու համար նա երգում է.

«Ծով քեզ գինի, գեամին քեզ կթխայ (բաժակ)

Գու լից, դու խմի, Աստուած քեզ կուտայ:

Մտեր ես մաւան ձեռք կուտաս սկու աման.

Աղջիկ, դու հասար քո սրտի մուրաղին,

Էս աշնան կերթաս քո պսակին:

Արծաթ քեզ քամար՝ ոսկին բերազուհի.

Ալմաստ ահուենք քեզ հոճակ:

Այս բողոքը քարեյաջող դուշակութիւն են համարուում այն ազջկայ կամ տղայի համար, ով սիրահարուած է, կամ մէկի վրայ խորհուրդ է արել:

Ես ազջիկ եմ, ալ հուզեմ.

Ալս ծալուծալ հուզեմ,

Երբ եարիս տուն երթամ,

Գօտիկս թերմայ շալ հուզեմ:

Իր կողմից աղան էլ բան չի խնայում իր սիրած ազջկայ սիրտը ուրախացնելու համար.

Ինձ ծառ չինարի պիտէր.

Մէջ վանայ դաշտին բուսնէր.

Ճող թալէր Ոստան ծածկէր,

Ոստան քե ոսկի կուբայ,

Պանձրաշէն արեն ի վերէն:

Կամ թէ.

Մէջացդ առնեմ ոսկի քամար՝

Ջովահիր ահներն ի վերէն.

Մատիտ առնեմ ոսկի մասնիկ՝

Ալմաստ ահներն ի վերէն.

Ոտացդ առնեմ կտրմիր ջգմէք՝

Արծթէ նալչէքն ի վերէն.

Չեռացդ առնեմ կարմիր խինէն՝

Սրմալի շարէն ի վերէն.

Գլխիդ առնեմ ոսկի թագ՝

Ուռուտու մոհրն ի վերէն:

Ինչպէս յիշեցիք երգերի լեզուն դեղեցիկ է և ոճը պատկերաւոր: Բերենք մի քանի օրինակ. — «Աստուած սկուն տայ, սկուն տայ՝ քանց մաջման քարվան դայ». «Ծով քեզ գինի գեամին քեզ կթխայ»: Ամէն տան մէջ կարելի է գտնել պատկերաւորութեան դեղեցիկ օրինակներ:

Երգերի մէջ կան յիշատակուած պատմական կտորներ անցեալ դառն վիճակի, աւելի Պարսից ակրապետութեան օրերից.

... Վայ իմ սիրած բիւլբիւլը.

Քաշեցին խանի դուռը:

• • Ով իմ սիրածն ինչ չտայ

Կքաշեմ խանի դուռը:

Կաքաւը կանգնել քարին,

Կտուցը լեքը արին,

Գազտան եսիր պաի,

Իմ սիրած եարին առին:
 Ձանազան անգերի երգերից իրար նման կտորներ շատ կան
 օրինակ

Վանեցու

Առակ էլար մէջ գեղին,
 Սիրտք ինկաւ օձու լեղին,
 Քո հօրն ու մօրն ինչ ասեմ
 Որ քե տուին տախ տղին:

Վանեցու

Ծաղիկ ունիմ կարմիր ի,
 Կարմիր չի նարնջի ի.
 Ետք բռնեի ամօթ չի,
 Թարի անեի բալայ ի:
 Վանեցու

Բալնիօն երկնքով ընցաւ,
 Մեր բարոց դռներն երաց.
 Մեր տուն արևով լցուաւ,
 Մեր սեղան կարմիր խնձորով:

Գանձակեցու

Գնացի ջուրք ջրի,
 Ոտք ընկաւ օձու լեղի.
 Իմ հօրն ու մօրն ինչ ասեմ,
 Ինձ տուին ղարիք տղի:
 Երևանցու

Ծաղիկ ունիմ ալայ ա.
 Ալա չի ալվալայ ա.
 Ետք բռնելը լաւ բան ա,
 Բաց թողալը բալայ ա:

Նոր-Նախիջևանցու

Երկինքէն բալնիքն ընկաւ,
 Տաճարին դուռն բացուեցաւ.
 Տաճարն արևով լցուաւ
 Սուրբ սեղան զարդարուեցաւ:

Այսպիսի նման կտորներ շատ ու շատ կարելի է ձարել
 վիճակի երգերի մէջ:

«Ձան գիւլում»ներ հաւաքողների անուշադրութեան պատ-
 ճառով սրանց հետ են խառնուել ժողովրդական սիրոյ երգերից
 շատ կտորներ. դժուար է տարբերութիւն դնել և ջոկել, որով-
 հետև հէնց վիճակի երգերն էլ մեծ մասով սիրային են: Մեր
 հաւաքած աւելի քան 500 տուն երգերը իրենց մէջ պարունա-
 կում են այնպիսի դոճարներ, որ մրցում են առաջնակարգ բա-

նաստեղծութիւննիրի հետ. այդ կտորները հանրածանօթ են, շարունակ երգուում են, դրա համար աւելորդ եմ համարում այստեղ դնել. բաւական է վերցնել «Քնար Հայկականը» այնտեղ առատութեամբ կայ այդ լաւ կտորները:

Վերջացնում ենք այս ուսումնասիրութիւնը, յիշելով այն գրաւոր և ընթանացի աղբիւրները, որոնք ձեռքի առկ ենք ունեցել այս հետաքրքիր նիւթը ուսումնասիրելիս:

1. «Ազգագրական Հանդէս»—1897—98, և 900՝ Ջաւախքի, Սիսիանի, Ջանգեղուրի և Բուլանըխի ու Պանձակի մասին:
2. «Արձագանք» 1894 № 54՝ Ուտէացոց Նիթ գիւղի մասին:
3. «Բիւրակն» 1898 (362) Տիգրանակերտի և (596) Խիանի մասին:
4. «Առածք Նոր-Նախիջևանի» (94) նոյն տեղի մասին:
5. «Մելիքի աղջիկը»—Վարանդայի մասին:
6. Հնութիւնք Ակնայ» (107) նոյն տեղի մասին:
7. «Կռունկ» 1860—Աշտարակի մասին:
8. «Նոր-Գար» 1896 № 77՝ Մշի, 95 № 76՝ Լէյլ ու Մէջլում:
9. «Փշրանքներ»—Աբարանի:
10. «Վանայ սաղ»—I, և II. նոյն տեղի:
11. «Der Armeniche Volksglaube»—Abegian V.
12. Բերանացի տեղեկութիւններ հաւաքել եմ Համէնի, Կողքի, Արճիէի, Արճէշի, Նուխու, Գործօթի, Հին-Բայազիտի և այլն տեղերի մասին:

Գալուստ.

Ն. Կ. Մ. ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԸ.

№ 195

2 նոյեմբերի 1908 թ., Թիֆլիզում.

Այսօր վերադառնալով Թիֆլիզ քաղաքը, ես ստանձնեցի Բարձրագոյնս ինձ յանձնուած երկրի վարչութիւնը որի մասին յայտնուի եմ ընդհանրութեան:

Ստորագրել է՝ Նորին Կայսերական

Մեծութեան Կովկասի Փոխարքայ

Գեներալ-Ազիւտանտ

Կոմս Վորոնցով Դաւիթ: